Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

EU4GREENRECOVERYEAST

Արևելյան գործընկերության երկրների համար կանաչ, դիմակայուն և մրցունակ աճի մոդել

Շրջանաձև տնտեսության խթանում

Արևելյան գործընկերության երկրներն աստիճանաբար բարելավել են իրենց ռեսուրսների արտադրողականությունը՝ բնական ռեսուրսների կամ օգտագործված նյութերի մեկ միավորի հաշվով առաջացած տնտեսական արդյունքը: Սա ձեռք է բերվել Արևելյան գործընկերության հինգ երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում՝ ռեսուրսների արդյունավետությունը և ՓՄՁ-ների արտադրողականությունը բարձրացնելու, ինչպես նաև ենթակառուցվածքներն արդիականացնելու համար թիրախավորված քաղաքականություններ իրականացնելու և գործիքակազմ կիրառելու միջոցով:

Միևնույն ժամանակ, ռեսուրսների արտադրողականության աստիճանը տարբեր է Արևելյան գործընկերության երկրներում՝ պայմանավորված նրանց տնտեսական կառուցվածքների, էներգիայի աղբյուրների, արտադրական գործելակերպի և բնական պաշարների առկայության տարբերություններով: Կա զգալի բարելավման տեղ, և անհրաժեշտ է «կանաչ խափանում»՝ քաղաքականության, կազմակերպչական և տեխնոլոգիական շրջանակների առումով՝ շրջանաձև տնտեսության սկզբունքների և գործելակերպի ավելի արագ ներդրումը հնարավոր դարձնելու համար:

Implementing partners:

ENVIRONMENT AGENCY AUSTRIA · EXPERTISE FRANCE GROUPE AFD · OiEau International Office for Water · OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES · UNECE · UNIDO UNITED NATIONS INDUSTRIAL DEVELOPMENT ORGANIZATION Progress by innovation

Շրջանաձև տնտեսության խթանմանն ուղղված պլանավորված միջոցառումներ

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման գործակալության, Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության և ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի ղեկավարությամբ՝ ապագա արտադրանքի ոչ ամբողջական ցանկ

Թվային գործիքների միջոցով ազգային արժեքային հիմնական շղթաներում շրջանաձև տնտեսության գործելակերպի խթանում՝ ուղղորդելու որոշումների կայացումը և հնարավորություն ընձեռելու ՓՄՁ-ներին ընդունել կայուն լուծումներ

- *ՓՄՁ-ների շրջանում թվային գործիքների խթանում՝ շրջանաձև գործելակերպի ներդրմանն աջակցելու նպատակով.*
- *Արդյունաբերական սիմբիոզի և թափոնների քարտեզագրման հետագա ընդունման խթանում.*
- *Արևելյան գործընկերության հաստատություններին գործիքակազմի տրամադրում՝ աջակցելու և վերահսկելու առաջընթացը շրջանաձև տնեսությաւն ոլորտում:*

ԵՄ շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագրի գիտելիքների ու լավագույն փորձի տարածում Արևելյան գործընկերության երկրներում՝ հզորացնելով ձեռնարկություններին՝ իրենց արտադրությունն ավելի շրջանաձև դարձնելու առումով

- *Շահառու խմբերի կարողությունների զարգացում.*
- *Իրազեկության բարձրացում և շրջանաձև տնտեսության ներպետական կայուն ցանցեր:*

Շրջանաձև տնտեսության արժեքային գերակա շղթաներում շահագրգիռ կողմերի և բիզնեսների փոխադարձ կապերի ընդլայնում

- *Արևելյան գործընկերության երկրներում հետազոտողների, քաղաքականություն իրականացնողների, գործնական կիրառողների և բիզնես ոլորտի միջև կապերի խորացում.*
- *Համագործակցություն Արևելյան գործընկերության երկրների բիզնեսների և շրջանաձև տնտեսության ոլորտում միջազգային շահագրգիռ կողմերի միջև:*

Ի՞նչ է արդեն արվել

«ԵՄ-ն՝ շրջակա միջավայրի համար. Կանաչ տնտեսություն» ծրագրի (2019-2024 թթ.) միջոցով ԵՄ-ն համապարփակ աջակցություն է ցուցաբերել ռեսուրսների արտադրողականության և արդյունավետության բարձրացման համար:

Միջոլորտային քաղաքականության և տեխնիկական առումներով, աջակցություն է տրամադրվել, օրինակ՝ քաղաքականության գործիքներ ներդնելու (ինչպես օրինակ՝ արտադրողի ընդլայնված պատասխանատվությունը), կայուն պետական գնումների, էկո-նորարարության և էկո-նախագծման կիրառումը խթանելու, **ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության գործելակերպի** ներդրման, շահագրգիռ կողմերին ԵՄ կանաչ արտադրանքի միասնական շուկայի պահանջներին ծանոթացնելու, թափոնների վիճակագրությունը բարելավելու, թափոնների հոսքերը վերլուծելու և թափոնների կառավարման ռազմավարությունները բարելավելու համար: Սա իրականացվել է 2013 թվականից ի վեր իրականացվող ԵՄ տարածաշրջանային հաջորդական ծրագրերի միջոցով:

Ինչ վերաբերում է **համայնքային թափոնների կառավարման ենթակառուցվածքներին**, Հարևանության ներդրումային հարթակից և Արևելյան Եվրոպայի էներգետիկ արդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության բազմադոնոր հիմնադրամից ներդրումային դրամաշնորհներ են հատկացվել՝ տարածաշրջանում թափոնների կառավարման ենթակառուցվածքները արդիականացնելու, այդ թվում՝ վերամշակման հզորությունների ստեղծման համար: Արտադրական ոլորտում մեծածավալ աշխատանք է կատարվել ՓՄՁ-ների՝ կանաչ գործելակերպի բարելավման համար, այդ թվում՝ ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման գործակալության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և միջազգային ֆինանսական հաստատությունների մասնակցությամբ: Այս աշխատանքն իրականացվել է ԵՄ տարածաշրջանային և երկկողմանի պորտֆելների միջոցով և հանգեցրել նրան, որ հարյուրավոր ձեռնարկություններ տեղեկացվել են շրջանաձև տնտեսության առավելությունների մասին և օգտվել դրանցից՝ ուսուցման, մասնագիտացված փորձագիտական խորհրդատվության և գործընկերների միջև փորձի փոխանակմամբ գիտելիքների բարելավման միջոցով: Մասնագիտացված գործիքակազմի կիրառումը նպաստել է ռեսուրսների արտադրողականության վերաբերյալ գիտելիքների տարածմանը և հնարավորություն է ընձեռել ՓՄՁ-ներին՝ իրականացնել ինքնագնահատումներ:

Արդյունքների ամփոփում

Տեղեկատվական թերթիկներ շրջանաձև տնտեսության և Արևելյան գործընկերության երկրներում նոր աճի հնարավորությունների վերաբերյալ

Գրքույկներ տարբեր շրջանաձև ուղիների վերաբերյալ

Արդյունաբերական թափոնների քարտեզագրման ամփոփագրեր և զեկույցներ Արևելյան գործընկերության երկրներում



Ու՞մ համար

ԵՄ Արևելյան գործընկերության երկրների կառավարություններ (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա). բարձրացնել շրջանաձև տնտեսության վերաբերյալ իրազեկվածությունը և ընդլայնել կարողություններն ու ինստիտուցիոնալ համագործակցությունը՝ շրջանաձև տնտեսության անցման առաջընթացը խթանելու և վերահսկելու համար:

Բիզնես ոլորտ. ձեռնարկատերերին և նրանց միություններին տրամադրել մի շարք մեթոդաբանություններ, մոնիթորինգի շրջանակներ և ինքնագնահատման գործիքակազմ:

Փոքր և միջին ձեռնարկություններ. շրջանաձև տնտեսության ցանցերի և համայնքային ակումբերի միջոցով միմյանց հետ փոխկապակցել նրանց և խթանել փորձի փոխանակումը՝ հնարավորություն ընձեռելով տեղեկատվություն ստանալ ԵՄ լավագույն հասանելի տեխնոլոգիաների և գործելակերպի վերաբերյալ:

Առանձին օգտատերեր. հասանելիություն շրջանաձև տնտեսության վերաբերյալ գիտելիքների, բիզնես գործելակերպի և ընդհանուր տեղեկատվության **շտեմարաններին:**

Ուզո՞ւմ եք ավելին իմանալ

Ավելի շատ ռեսուրսներ հասանելի են այստեղ

www.eu4greenrecoveryeast.eu

www.eu4environment.org

Մի՛ նետեք հանրային ճանապարհներին

2025 թ. մայիս
Սույն հրապարակումը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից: Դրա բովանդակության պատասխանատուն բացառապես «ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման» ծրագրի հաղորդակցության բաղադրիչի կառավարիչ հանդիսացող Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակն է, և արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության տեսակետները: *© - 2025թ. - Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզավորված է Եվրոպական միության կողմից՝ պայմաններով:*